

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԵՂՅԱՆ ՄԱՐԻՎԱՆ ԵՐՎԱՆԴԻ

ՌՈՍՏՈՄ (ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ)։

ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԸ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ

պատմական գիտությունների թեկնածուի գիտական

աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2012

Ատենախոսության թեման հաստատվել է և. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական դեկանավար

պատմական գիտությունների դոկտոր,

արոֆեսոր Կարապետյան Մ. Ս.

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների դոկտոր

Խուդինյան Գ. Ս.

պատմական գիտությունների թեկնածու,

դոցենտ Գրիգորյան Յ. Բ.

Առաջատար կազմակերպություն

Դայաստանի ազգային արխիվ

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. մարտի 16-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՆ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. փետրվարի 15 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Յ. Ղ.

ԹԵՍԱՅԻ ԱՐԴԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

ՀՅ Դաշնակցության (ՀՅԴ) հիմնադիրներից Ստեփան Զորյանը (Ռոստով) 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների հայ ազգային-ազատագրական շարժման առանցքային դեմքերից է: Նրա կյանքի ու գործունեության համակողմանի ուսումնասիրությունը հարստացնում է հայոց նոր պատմության վերջին երեսնամյակի վերաբերյալ մեր գիտելիքները՝ բացահայտելով այնպիսի նոր փաստեր և իրադարձություններ, որոնք ունեն արդիական-քաղաքական մեջ հնչեղություն: Մասնավորապես, 1905-1906 թթ. հայ-քարարական կոիվների շրջանում Ռոստովի կողմից կատարած գործի կարևորությունը ավելի ամբողջական ու խոր կերպով գիտակցվեց 1988 թ. սկսված Ղարաբաղյան շարժման ժամանակ, երբ հայ ազատամարտիկների նոր սերունդը շարունակեց 20-րդ դարի սկզբներին Ղարաբաղի լեռնային արահետներով անցած այդ մեջ հայրենասերի առաքելությունը: Ներկայումս խիստ կարևոր է նաև Սոցիալիստական ինտերնացիոնալի միջոցով տարածաշրջանի ժողովուրդների միջև հարաբերությունների կարգավորման համար Ռոստովի ձեռնարկած քայլերի ուսանելի փորձը՝ հնչանակ ներ հարևան պետությունների հետ շփվելու, այնպես էլ միջազգային կազմակերպություններին ինտերվելու գործընթացներում:

Իսկ 1918 թ. բարդ իրադրության մեջ Բաքվի հերոսամարտը նախաձեռնելով՝ Հայաստանի Հանրապետությունը բոլոքական նոր ներխուժումից փրկելու համար Ռոստովի ձեռնարկած իմաստուն քայլերը խիստ ուսանելի են ներկայումս նույնական թուրք-ադրբեյջանական աքցանի մեջ հայտնված՝ Հայաստանի երրորդ Հանրապետության համար:

ԹԵՍԱՅԻ ՆՊԱՏՎԿԱՆ ՈՒ ԽՍԴԻՐՍԵՐԸ

Աստեղախոսության նպատակն է արխիվային նյութերի, փաստաթղթերի ժողովածուների, հիշողությունների, մամուլի հրապարակումների և գիտական շրջանառության դրված այլ նյութերի համեմատական քննության միջոցով՝

1. ՀՅԴ պատմությունը ուսումնասիրել կուսակցության գործունեության սկզբունքների վրա իր անկրկնելի «դրոշմ» դրած Ռոստովի ուրույն դերակատարության պրիզմայի միջով և այդ ճանապարհով խուսափել ավելորդ գումազարդումներից կամ էլ՝ անհիմն քննադատություններից:

2. Բացահայտել ոչ միայն այդ կուսակցության ընդունած որոշումների բովանդակությունը, այլև դրանք կյանքի կոչելու մեխանիզմներն ու աշխատակարգերը:

3. Ներկայացնել ՀՅԴ պատմության այն մութ էջերը, որոնք անհայտ են մնացել ուսումնասիրողների համար՝ Ռոստովի արտակարգ գաղտնապահության ու համեստության պատճառով:

4. Համակողմանի քննության ենթարկել Ռոստովի վառ անհատականությունը, որի կյանքի ուսանելի փորձը անհրաժեշտ է ցանկացածքանակաշրջանի հայ քաղաքական գործիքներին:

5. Լուսաբանել հայ ժողովորդի ինքնապաշտպանության կազմակերպման համար 1905-1906 թվականներին Ռոստովի կողմից ստեղծված կառույցների հարուստ փորձը՝ նոր պայմաններում այն ստեղծագործաբար կիրառելու համար:

ՌՈՒՌԻՇԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՍՎԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՍԱԿՆԵՐԸ

Սույն ատեղախոսության ժամանակագրական շրջանակները ընդունվում են Ռոստովի մանկության ու պատանեկության օրերից մինչև նրա մահը՝ 1867-1919 թթ.

Յայոց պատմության այն առանցքային իրադարձությունները, որոնցում ակտիվ դերակատարություն է ունեցել այդ ականավոր քաղաքական գործիչը: Չտարանցածտելով Ռուսությունի գործունեությունը ՀՅԴ պատմությունից, ատենախոսության շրջանակների մեջ ենք ներառել կուսակցության այն բոլոր մեջ ու փոքր գործերը, որոնք իրականացվել են Ռուսությունի կողմից, նրա հանձնարարությամբ և ազդեցությամբ: Այդ բոլոր փաստերն ու իրադարձությունները համակողմանի ըննելու համար առանձնացրել ենք Ռուսությունի քաղաքական գործունեության երեք հիմնական շրջանները:

ա) սկզբից մինչև 1890-ական թվականներին և 20-րդ դարի սկզբին արտասահմանում (Շվեյցարիա, Բուլղարիա) նրա երկարատև գործունեության ավարտը (1902 թ. սեպտեմբեր),

բ) 1903 թվականին սկսված Անդրկովկասի հայության հակացարական շարժման, ռուսական առաջին հեղափոխության (1905-1907 թթ.) ու 1905-1911 թթ. իրանական հեղափոխության ընթացքում Ռուսությունի ծավալած գործունեությունը (1903-1909 թթ.),

գ) Ռուսությի բուռն քաղաքական գործունեությունը Առաջին աշխարհամարտի նախօրեին (1910-1914 թթ.) և պատերազմի ընթացքում 1914-ից մինչև 1918-ի վերջերն ընկած ժամանակաշրջանում:

Ատենախոսության երեք գլուխների շարադրանքը համապատասխանացվել է Ռուսությունի կյանքի ու գործունեության այս երեք ժամանակահատվածներին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՐԸ ՄԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը շարադրել ենք պատմագիտական ուսումնասիրության պատմահամեմատական և պատմաքննական մեթոդների զուգորդման միջոցով: Դեպքերն ու իրադարձություններն առավել ամբողջական ու համակողմանի ներկայացնելու համար համալիր (կոմպլեքս) մոտեցում է ցուցաբերվել ատենախոսության մեջ օգտագործված մեծարգով սկզբնալրյուրների արխիվային վավերագրերի, փաստարդերի ժողովածուների հոլովածուների ու մամուլի նյութերի հանդեպ:

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ փորձ է կատարվում գիտականորեն շարադրել Ռուսությի կյանքի և գործունեության ամբողջական պատմությունը:

Ատենախոսության մեջ քննության է ենթարկվում ոչ միայն Ռուսությունի քաղաքական հայացքների ծևավորման գործընթացը, այլև վերլուծական բնույթ ունեցող նրա հոդվածների բովանդակությունը: Սակայն, քանի որ Ռուսությունը իր տեսական դատողությունները հիմնում եր այս կամ այն կոնկրետ քաղաքական իրավիճակի քննության վրա, ուստի դրանց ուսումնասիրությունը կատարվել է դեպքերի ու իրադարձությունների ընդհանուր շղթայի մեջ: Պատճառն այն է, որ Ռուսությունը տեսական հարցերու գրավում էր այնքանով, որքանով դրանք ծառայում էին իր նախաձեռնած գործերի իրականացմանը, ուստի նրա գաղափարական ժառանգությունն ուղղակի հնարավոր չէ սահմանագատել պրակտիկ գործունեությունից:

Ատենախոսությունն ունի գիտատեսական և գործնական կարևոր նշանակություն: Ան կարող է օգտակար լինել Յայոց պատմության մի շարք հիմնահարցերի ավելի խոր և ամբողջական ուսումնասիրության համար: Ազգային

ուժերի համախմբմանն ուղղված նրա իրատեսական ձեռնարկումները կարող են օրինակ դառնալ մերօրյա պետական այրերի, հասարակական-քաղաքական ուժերի համար: Ասենախոսության հարուստ փաստական նյութը, կատարված մեկնարանությունները կարող են նպաստել մատադ սերնդի ազգային ու պետական մտածողության գործին:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՍԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՍ ԱՍՏԻճԱՆԸ (ԱՂԲՅՈՒՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՍ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

Ուստոմի մահից անմիջապես հետո՝ 1919-1920 թթ., երբ վճռվում էր Հայաստանի Հանրապետության ճակատագիրը, իրենց առաջնորդի կորուստը սգացող ՀՅԴ տեսաբաններն ու գործիչները դեռևս հնարավորություն չունեին մանրանամորեն անդրադառնալ Ուստոմի կյանքի ու գործունեության տարբեր դրվագներին: Ուստի նրա մահվանից հետո Հայաստանում և Սփյուռքում լույս տեսած մահախոսականներն ու խճագրականները հիմնականում հրաժեշտի խոսքեր էին, որոնցում միայն բռուցիկ անդրադարձ էր կատարվում ՀՅԴ առաջնորդի հարուստ կենսագրությանը¹: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Սփյուռքում լույս են տեսել մեծ թվով կենսագրականներ և Ուստոմի գործունեության առանձին կողմներին ու շրջաններին նվիրված հուշագրություններ: Դրանցից կարևոր են Ուստոմի ուսանողական ընկերոց՝ Մարտին Շաքիրյանի հիշողությունները Մոսկվայի Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիայում 1890 թ. փետրվարին սկսված ուսանողական շարժման մեջ Ուստոմի ակտիվ դերակատարության մասին²:

1918 թ. Բաքվի հերոսամարտի ընթացքում Ուստոմի դրսնորած կամքի ու հաստատակամության մասին հարուստ վկայություններ են պահպանվել Սերգեյ Մելիք-Յովյանի հուշագրության մեջ³:

1928 թ. տպագրված Լիպարիտ Տագարյանի հուշագրությունում ներկայացվել են Ուստաստանի խորհրդային հշխանությունների հետ համագործակցելու ՀՅԴ փորձերը՝ հերթելով բոլշևիկների հետ համաձայնության եզրեր փնտորելուց դաշնակցականների հրաժարվելու մասին անհիմն կարծիքը⁴:

Իրանական հեղափոխության մեջ Ուստոմի ու ողջ ՀՅԴ խաղացած կարևոր դերակատարությունն արժնորելու փորձ է վաճեցի դաշնակցական գործիչ Հ. Պանիրյանի ոչ մեծ ուսումնասիրությունը⁵:

Ուստոմի մահվան 10-ամյակի կապակցությամբ՝ ՀՅԴ պաշտոնաթերը «Դրոշակը» իր հումկար-փետրվարյան համարի էջերի մեջ մասը հատկացրել է

¹ Տես Ուստոմ Զօրեան, «Մշակ», Թիֆլիս, 26 յունվարի, N19, էջ 2: Տես նաև՝ Ուստոմ խճագրական, «Վերածնունդ» կիսամսեայ հանդէս, Փարիզ, 15 փետրուար, 1919 թ., N 4, էջ 53-54:

² Ա.Շ.-ի յուշերը, Յայոց հասարակական շարժումների պատմութիւնից, գրի առաջ՝ Ն.Յանգոյց, «Յայենիք» ամսագիր, 1923, N 5, էջ 27-39:

³ Սերգեյ-Յովյան Ս., Բաքվի հերոսամարտը, «Յայենիք» ամսագիր, 1925, N 9, էջ 97-113:

⁴ Լ.Ն., Յայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ խորհրդային հշխանութեան միջեւ համագործակցութեան փորձեր, «Դրոշակ», Փարիզ, 1928, N 8-9, էջ 231-233:

⁵ Պանիրյան Հ., Հ.Յ.Դաշնակցութիւնը եւ պարսկական շարժումը, «Դրոշակ», Փարիզ, 1926, N 11-12, էջ 357-360, 1927, N 3, էջ 82-88:

Ուստոմի մասին գրված հիշողություններին, հոդվածներին և այլ հրապարակումներին⁶:

Միքայել Վարանյանը թ. Միքայելյանի, Ս. Զավարյանի քաղաքական դիմանկարների կողքին փորձել է ըստ արժանվույն գնահատել նաև Ուստոմի մեջ վաստակը ՀՅԴ ձևավորման գործում: «Դժվար է գտնել մեր հին ու նոր, ռուսակայ ու թուրքակայ բարձր մտաւորականութեան շարքերուն մեջ ուրիշ դեմք մը, որ լինելով ի բնե այնքան լայնօրէն օժտւած, ունենալով խելքի, հսկութի, արիութեան ու անձնազոհութեան այնքան առատ պաշար մը, միեւնոյն ժամանակ այն աստիճան գերծ լիներ ինքնքապաշտուուի, փառասիրութեան, ունայնամտութեան հակումներէն, ինչպես Ռուսումը⁷», - արձանագրում էր Ս. Վարանյանը: Ուստոմի գործունեությանը Վերջինիս տված գնահատականները հիմնված են նաև անձնական հուշերի վրա: Այդ պատճառով Ս. Վարանյանի աշխատության մեջ Ուստոմի մասին պահպանված տեղեկությունների մի մասը, նաև Վարանյանը 1903 թ. հայկական դպրոցների փակնան դեմ սկսված շարժման, իրանական հեղափոխությանը Ուստոմի մասնակցության վերաբերյալ առանձին փաստերն ու փաստաթղթերն ունեն աղբյուրագիտական արժեք:

1930-ական թթ. Ուստոմի կյանքի ու գործունեության վերաբերյալ նոր փաստաթղթեր և հոդվածներ հրապարակեց Ս. Վրացյանը⁸:

1934 թ. Բուստոնում լուս տեսած «Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան» փաստաթղթերի ժողովածուի առաջին հատորում ներառվել էին ՀՅԴ արխիվներում պահպանված Ուստոմի նամակների մի մասը, ինչպես նաև ՀՅԴ մյուս հիմնադիմների՝ թ. Միքայելյանի, Ս. Զավարյանի և կուսակցության այլ գործիչների Ուստոմին գրած նամակները⁹:

Ուստոմի կյանքին ու գործունեությանն էր նվիրված Գաբրիել Լազյանի ուսումնասիրության մի բաժինը, որտեղ հրապարակվեցին նաև ընդարձակ քաղվածքներ տարբեր տարիներին գրած նրա հոդվածներից¹⁰:

ՀՅԴ Զանավոր տեսաբան Վահան Նավասարդյանը իր «ՀՅԴ գաղափարաբանութիւնը»¹¹ հրապարակման և «Գաղափարների ողին:

⁶ Զամալեան Ա., Իմ հանդիպումը Ուստոմի հետ, «Դրոշակ», Փարիզ, 1929, N 1-2: Մազմանեան Վ., Յուլի Ռուսումի մասին, «Դրոշակ», Փարիզ, 1929, N 1-2: Տեր-Դաւթեան Յ., Ռուսումի վերջին օրերից, «Դրոշակ», Փարիզ, 1929, Խո. 1-2: Սասունի Կ., Ռուսումներ տպաւորութիւններ, «Դրոշակ», Փարիզ, 1929, N 1-2: Կրացեան Ս., Ռուսում (Կենսագրական ուրուագիծ), «Դրոշակ», Փարիզ, 1929, N 1-2:

⁷ Վարանյան Ա., Յ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992, էջ 95:

⁸ Վրացյան Ս., Տիկ. Եղիսաբէթ Զօրեան, «Վեն» Երկամսեայ հանդէս, Փարիզ, 1934, N 6, էջ 96-101:

⁹ Դիվան Հ.Յ. Դաշնակցութեան, յավելուած «Հայոենիք» ամսագրի, խմբ. Ս. Վրացյան, հ. 1, Պոսքըն, 1934:

¹⁰ Լազեան Գ., Եղափոխական դեմքեր (մտաւորականներ եւ հայուվներ), Գահիրէ, 1945, էջ 59-76:

¹¹ Նավասարդեան Վ., ՀՅԴ գաղափարաբանութիւնը (Դաշնակցութեան 60-ամեակի արիքով), «Յուշապատում Յ.Յ. Դաշնակցութեան 1890-1950», Բրուսում, 1950, էջ 167-259:

Դաշնակցութեան «ապակենտրոնացումի» առիթով¹² աշխատության մեջ լուսաբանել է Ռուսումի գործունեության տարբեր դրվագները, բացահայտել նրա տեղն ու դերը ՀՅԴ մեջ:

1905-1911 թթ. իրանական հեղափոխության մեջ Ռուսումի քաղաքական դերակատարությանն է անդրադարձել Յ. Ելմարը (Յ. Ռովիաննիսյան) իր ընդարձակ հրապարակման¹³ և «Եփրեմ»¹⁴ աշխատության մեջ:

1918 թ. Բարվի հերոսամարտին Ռուսումի մասնակցության մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել նրա երիտասարդ զինակիցների¹⁵ հիշողություններում:

ՀՅԴ չորրորդ ընդիանուր ժողովում կուսակցության միասնությունը պահպանելու համար Ռուսումի գործադրած ջանքերը բացահայտվել են այդ ժողովի մասնակից Վ. Վալայյանի (Ա. Վանցյան) Սփյուռքում հրապարակված ուսումնասիրության առանձին մասերում¹⁶:

1908 թ. երիտրուրքական հեղաշրջումից հետո ՀՅԴ քաղաքական ուղեգիր վերանայման հարցում Ռուսումի գրաված խիստ զգուշավոր կեցվածքին է անդրադարձել Ա. Աստվածատրյանը իր հրապարակման մեջ¹⁷:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Կարինում Ռուսումի ծավալած գործունեության առավել հետաքրքրական էջերն է լուսաբանել Ս. Վրացյանը իր կյանքի մայրամուտին գրած բազմահատոր հուշագրական աշխատության մեջ¹⁸:

Ենթանի արհավիրքից Կասպուրականի ու Տարոնի հայությանը փրկելու համար Ռուսումի գործադրած ջանքերը լուսաբանել է նրա զինակիցներից ու աշակերտներից մեկը՝ Կարո Սասունին իր հուշագրական բնույթի ուսումնասիրության մեջ¹⁹:

Ռուսումի մահվան 60-րդ տարեկանի հետ կապված Դրաչ Տասնապետյանի խմբագրությամբ լուս է տեսել «Ռուսում. մահուան վարսունամեակին առթիւ» արժեքավոր ժողովածում²⁰, որն ամփոփում է ոչ միայն Ռուսումի մասին Սփյուռքում հրապարակված հիշողությունների մեջ մասը, այլև «Դիվան ՀՅԴաշնակցության»

¹² Նաւասարդեան Վ., Գաղափարների ողին: Դաշնակցութեան «ապակենտրոնացում»-ի առիթով, Գահիր, 1951:

¹³ Ելմար Յ., Յ.Յ.Դաշնակցութիւնը եւ պարսից սահմանադրական շարժումը, «Յայրենիք» ամսագիր, Բոստոն, 1952, N 1-4, N 1, էջ 33-49, N 2, էջ 90-99, N 3, էջ 40-49:

¹⁴ Ելմար Յ., Եփրեմ, Թերերան, 1964:

¹⁵ Ամիրեան Գ., Ռուսումի հետ, «Յայրենիք» ամսագիր, Բոստոն, 1960, N 1-4, էջ 4-21: Խոյլեան Ո., 1918 եւ Բազուկի հերոսամարտը, «Յայրենիք» ամսագիր, Բոստոն, 1966, N 1-4: Ալչուչեան Ա., Ռուսում Բագրում, «Յայրենիք» ամսագիր, Բոստոն, 1956, N 7, էջ 1-13:

¹⁶ Վալայեան Վ., Յ.Յ.Դաշնակցութեան չորրորդ ընդիանուր ժողովը, «Յայրենիք» ամսագիր, Բոստոն, 1957, N 7, էջ 52:

¹⁷ Աստուածատրեան Ա., Մի էջ Յ.Յ.Դաշնակցութեան Վաճառյի ընդիանուր ժողովի պատմւթիւնց, «Յայրենիք» ամսագիր, Բոստոն, 1959, N 9-12:

¹⁸ Վրացեան Ա., Կեանքի ուղիներով. դեպքեր, դժմքեր, ապրումներ, հ. Ա. Գահիր, 1955, հ. Բ, Պէյրութ, 1960:

¹⁹ Սասունի Կ., Թթքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պէյրութ, 1966:

²⁰ Ռուսում. մահուան վարսունամեակին առթիւ, խմբագիր Դրաչ Տասնապետեան, Պէյրութ, 1979:

Երկաստորյակում ու «Վեն» հանդեսի էջերում և «Դրոշակում» ժամանակին Ս. Վրացյանի տպագրած Ռոստոմի նամակները, հողվածներն ու գրությունները:

Չնայած իր աղբյուրագիտական մեջ արժեքին, այս հորեանական ժողովածուի մեջ չեր ներառվել ՀՅԴ Ռոստոմի արխիվում ամփոփված Ռոստոմի նամակների մեջ նաև, իսկ նրանում առկա 93 նամակները սույ արտատպություններ էին՝ Սփյուռքում հրապարակված նախորդ ժողովածուներից կամ էլ առանձին ամսագրերից: Բացակայում էին նաև ՀՅԴ ընդհանուր և Կովկասյան ռայոնական ժողովներում Ռոստոմի ունեցած ելույթների, ներկայացրած գրավոր առաջարկությունների ու հաշվետվությունների տեքստերը: Այդ բացը լուացրեց նույն՝ Յ. Տասնապետյանի և Երվանդ Փամբուկյանի ջանքերով հրապարակված «Խիւեր ՀՅԴաշնակցութեան պատմութեան համար»²¹ յոթհատորյա ժողովածուն, որն ամփոփում է 20-րդ դարի սկզբներին տեղի ունեցած ՀՅԴ մի շարք ընդհանուր ու Կովկասյան ռայոնական ժողովների բանաձևերը, արձանագրությունները, որոշումներն ու այլ փաստաթղթեր: Այսկ Ռոստոմի անտիպ և արդեն տպագրված նամակները ամբողջացնող ժողովածուն տպագրվեց 1999 թվականին՝ կրկին Յ. Տասնապետյանի խմբագրությամբ²²: Ռոստոմի մահվան 80-ամյակի կապակցությամբ լույս տեսած այդ հրատարակության մեջ առկա են ՀՅԴ Ռոստոմի արխիվում պահվող ու Ռոստոմի ծեռագրով գրված ևս 358 նամակներ: Այսպիսով, Ռոստոմից մնացել են ուղիղ 478 նամակներ, որոնք գրեթե ամբողջությամբ վերաբերվում են նրա քաղաքական գործունեությանը: Դայաստանում և Սփյուռքում վերջին տարիներին հրապարակվել են նաև Ռոստոմի գործունեության տարրեր դրվագների վրա լույս սփյուռ ժողովածուները²³:

Չնայած 70 տարի շարունակ ՀՅԴ պատմության ուսումնասիրման վրա դրված արգելվներին, խորհրդահայ պատմագրության մեջ որոշակի անդրադարձ է կատարվել Ռոստոմի կյանքի ու գործունեության առանձին դրվագներին:

Խորհրդային պատմագրության մեջ տարաբնույթ գնահատականներ են հնչել Ռոստոմի քաղաքական գործունեության վերաբերյալ, նաև անդրադարձ է կատարվել Ռոստոմի կյանքի ու գործունեության առանձին դրվագներին:

Խորհրդային պատմագրության մեջ տարաբնույթ գնահատականներ են հնչել Ռոստոմի քաղաքական գործունեության վերաբերյալ, նաև անդրադարձ է կատարվել Ռոստոմի կյանքի ու գործունեության առանձին դրվագներին:

Դրա գործիչները ներկայացվում են որպես խորհրդային իշխանության թշնամիներ և «անգլիական իմպերիալիզմի գործակալներ»: Դրանով հանդերձ, առանձին հետինակների կողմից փորձ է արվել սկզբունքային տարրերություն դնել խորհրդային իշխանությունների հետ համագործակցող Ռոստոմի ու նրա գլխավորած ՀՅԴ Բարձի կազմակերպության ու Թիֆլիսի Յայոց Ազգային խորհրդի քաղաքական ուղեգծերի միջև: Նման դիտանկունից է քննել Ռոստոմի 1917-1918 թթ. գործունեությունը

²¹ Խիւեր Յ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, խմբ. Յ. Տասնապետեանի, հրատ. Յ.Յ. Դաշնակցութեան, Պեյրութ, հ. ա., թ. տպագրութիւն, 1984, հ. բ., թ. տպագրութիւն, 1985, հ. գ., 1976, հ. դ., 1982; հ. Ե (առաջ. և խմբ. Ե. Փամբուկյան), 2007, հ. Զ, 2010; հ. Ը, 2011:

²² Ռոստոմ. Նամակներ, մահուան ութունամեակի առթիւ, խմբագիր Յ. Տասնապետեան, Պեյրութ, 1999:

²³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. 2, աշխատասիրությամբ Վրբուր Պեյլերյանի, Եր., 2005:

Արամայիս Մնացականյանը իր «Հոկտեմբերը Եվ Հայաստանը»²⁴ հոդվածաշարի մեջ: Խորհրդային իշխանությունների հետ Ուստոմի և ՀՅԴանակցության 1917 թ. վերջերին-1918թ. սկզբներին հաստատած կապերն ու հարաբերությունները, մասնավորապես «Թուրքահայաստանի մասին» դեկտեմբեր կազմելու համար ծավալված հանագործակցությունը բավականին մանրանասն ուսումնասիրության է ենթարկել ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը: Մոսկվայի արխիվներից հայտնաբերված արժեքավոր փաստաթղթերի, մասնավորապես ժողովնախառնության նիստերի 1917 թ. դեկտեմբերի 29-ի արձանագրության միջոցով նա ցույց է տվել, որ Ուստոմն ուղղակի և անմիջական մասնակցություն է ունեցել հայկական հարցում Խորհրդային Ուստատանի քաղաքականության սկզբունքները հստակեցնող այդ փաստաթղթի նախնական տարրերակը կազմելու գործում²⁵:

Հետխորհրդային շրջանում, երբ հայրահարվեցին ՀՅԴ պատմության ուսումնասիրության վրա դրված արգելքները, հայ պատմագրության կողմից ստեղծվեցին բազմաթիվ աշխատություններ 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների հայ ազգային-ազատագրական շարժման, ինչպես նաև ՀՅԴ պատմության տարրեր շրջանների վերաբերյալ:

Ուշադրության է արժանի նաև սփյուռքահայ պատմաբան Ռուբինա Փիրումյանի աշխատությունը²⁶, որը հետաքրքրական տեղեկություններ է պարունակում Ուստաստանի բոլշևիկյան իշխանությունների հետ համագործակցության նպատակով 1917-1918 թթ. Ուստոմի ծերնարկած քայլերի մասին:

Հրանտ Ավետիսյանը իր արժեքավոր աշխատության մեջ նորահայտ արխիվային վավերագրերի միջոցով մանրանասն քննության է ենթարկել Բաքվի հերոսամարտի պատմությունը՝ վերանայելով և վերարժուելով Ուստոմի դերակատարության վերաբերյալ միակողմանի գնահատականները²⁷:

Ցարական իշխանությունների կողմից ընդունված 1903 թ. հունիսի 12-ի օրենքը կյանքի կոչելու փորձերի դեմ անհավասար պայքարում ՀՅԴ-ի ու անձամբ՝ Ուստոմի ունեցած ճերդումը համակողմանիորեն լուսաբանվել և ըստ արժանվույն գնահատվել է. Կոստանդնյանի արժեքավոր ուսումնասիրության մեջ²⁸:

Գևորգ Խուրինյանը իր արժեքավոր աշխատությունների²⁹ մեջ նորահայտ վավերագրերի միջոցով, ի թիվս այլ հարցերի, քննության է ենթարկել նաև 1890-ական թթ. առաջին կեսին Ուստոմի ծավալած գործունեությունը, ցույց է տրվել նրա խաղացած կարևոր դերը ՀՅԴ ծնավորման գործում:

²⁴ Մնացականյան Ա., Հոկտեմբերը Եվ Հայաստանը, մաս 4-րդ, «Հայրենիքի ծայն» շաբաթաթերթ, Եր., 1967, 8 հունվարի, N 2, էջ 7:

²⁵ Խուրշուդյան Լ. Ա., Սովետական Ուստաստանը Եվ հայկական հարցը, Եր., 1977, էջ 40:

²⁶ Փիրումեան Ռ., Հայաստանը Հ.Յ.-Բոլշևիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921), Եր., 1997:

²⁷ Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918թվականին, Եր., 1997, էջ 299-326:

²⁸ Կոստանդնյան Է., Սկրինչ Խոհման: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Եր., 2000, էջ 402-420:

²⁹ Խուրինյան Գ. Ս., Հ.Յ. Ղաշնակցության ծնունդը, Երևան, 2000: Հ.Յ. Ղաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895թվականի վերջերը), Եր., 2006:

Դամեւտ Գևորգյանը³⁰ անդրադառնալով 1905-1906 թթ. հայ-թաթարական կորիների պատմությանը, բացահայտել է Ռոստոմի կարևոր դերակատարությունը ՀՅԴ Բաքվի, Շուշիի ու Գանձակի կազմակերպությունների ուժերը համախմբելու և հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում:

Դրաչիկ Սիմոնյանը իր արժեքավոր աշխատության չորս հատորներում³¹ մանրակրկիտ կերպով ուսումնասիրել է հայ-թաթարական կորիների ընթացքը և ՀՅԴ-ի առաջնորդ Ռոստոմի ձեռնարկած հետևողական քայլերը՝ Անդրկովկասի հայության ինքնապաշտպանության կազմակերպման ուղղությամբ: Յ. Սիմոնյանը բացահայտել է նաև 1905-1907 թթ. ՀՅԴ-ի ներսում առանձին հոսանքների ձևավորման պատճառներն ու հանգամանալից կերպով անդրադարձել կուսակցության համախմբան համար չորրորդ ընդիմանուր ժողովում Ռոստոմի կատարած աշխատանքներին:

Այսպիսով՝ հայ պատմագրության կողմից վերջին տարիներին ստեղծված մի շարք արժեքավոր աշխատություններում ուսումնասիրության են Ենթարկվել Ռոստոմի գործունեության որոշ ժամանակահատվածները և դրվագները: Այդ գործն ամբողջացնելու համար գիտական կարևոր արժեք ունեն Յայաստանի ազգային արխիվի 121 ու 200 ֆոնդերում պահպող Բաքվի հերոսամարտի մի շարք մասնակից գինվորականների, այդ թվում՝ գեներալ Յ. Բագրատունու գեկուցագրերն ու հիշողությունները և ժամանակակիցների վկայություններն ու նամակները՝ Ռոստոմի ու նրա գործունեության մասին:

Արխիվային նյութերից մեծ հետաքրքրություն են ներկայացնում ՀՅԴ այն ազդագրերն ու հայտարարությունները, որոնք գրվել են կամ Ռոստոմի ձեռքով, կամ էլ նրա անմիջական հանձնարարությամբ: Օգտվել ենք նաև Յայաստանի ազգային արխիվի 200, 402, 4047 ֆոնդերում պահպող մի շարք դաշնակցական գործիների՝ Ռոստոմի համագյուղացի Լևոն Սարգսյանի /Անկախ/, Պարսկաստանում և ապա Բաքվում Ռոստոմի մտերիմ զինակից Սարգսի Մեհրաբյանի /Խանասորի Վարդան/, Բաքվում ՀՅԴ և Յայոց Ազգային խորհրդի նշանակող դեկազրաններից մեկի՝ Սարգս Արարատյանի ծեռագիր հիշողություններից, գրություններից, նամակներից:

Կարինում 1895 թ և 1910-1914 թթ. Ռոստոմի ծավալած գործունեության մասին հետաքրքրի տեղեկություններ են պահպանվել Յայաստանի ազգային արխիվի 420-րդ ֆոնդում պահպող Օ. ճգնավորյանի ծեռագիր աշխատության մեջ:

1905-19011 թթ. իրանական հեղափոխության, մասնավորապես՝ Թավրիզի 1908-1909 թթ. ապստամբության պատմության է նվիրված Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի վավերագրերի մեջ պահպող անհայտ հեղինակի «Խիթեր ապագայ պատմութեան» ծեռագիր աշխատությունը:

Թվարկված և այլ արխիվային նյութերի հետ միասին մանրամասն ուսումնասիրել ենք նաև ՀՅԴ նամուլի էջերում, մանականդ՝ երկար տարիներ Ռոստոմի կողմից խնբագրված «Դրոշակ» պաշտոնաթերթում առկա հարուստ նյութերը:

³⁰Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի Կովկասյան ճակատը, Եր., 2010:

³¹ Սիմոնյան Յ. Ո., Ազատագրական պայքարի ուղիներում, չորս գրքով, գիրք I, III, IV, Եր., 2003, 2009, 2010:

Այսպիսով, Ռուստոմի կյանքի ու գործունեության ուսումնասիրության առաջին փորձը հանդիսացող ներկա ատենախոսությունը շարադրվել է թեմայի վերաբերյալ առկա սկզբնաղբյուրների համապարփակ ու անբողջական քննության հիմնան վրա: Քանզի Ռուստոմի կյանքի, գործունեության և աշխարհայացքի լուսաբանումը դա մեկ ականավոր գործչի պարզ կենսագրություն չէ, այլ ՀՅԴ-ի պատմության կարևոր էջերից մեկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՍ ՓՈՐՉԱՔԸՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի կողմից: Ատենախոսության հիմնադրույթներն ու եզրակացությունները հրատարակվել են հեղինակի 7 հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ և ԲՈՎԱՇՎԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից՝ 12 ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 187 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱԸ մեջ հիմնավորել են թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, ներկայացել են հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը և օգտագործված աղբյուրները:

ԱՊԱԶԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «ՈՂՈՍՏՈՄԻ ՔԱՂԱՔԱԿԱԸ ԳՈՐԾՈՒԵՆՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 80-90-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ», բաղկացած է 4 ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխում «Նեղափոխական պայքարի առաջին փորձերը», բազմաթիվ փաստերի ուսումնասիրության հիմնան վրա ներկայացրել ենք Ռուստոմի մանկության և պատանեկության շրջանը:

Ստեփան Գրիգորի Զորյանը /Ռուստոմ/³² ծնվել է 1867թ. հունվարի 18-ին Երևանի նահանգի Նախիջևանի գավառի 8ղմա /Զանանար/ գյուղում : Նախնական կրթությունը ստացել է տեղի ժխական դպրոցում, որն ավարտելուց հետո՝ 1886 թ. Ստեփանն ընդունվեց Վարշավայից ոչ հեռու գտնվող Նովո-Ալեքսանդրիայի գյուղատնտեսական ճեմարանը:

1887 թվականին Ռուստոմն ընդունվել է Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիա³³: 1889 թվականին Մոսկվայում տեղի ունեցավ հայ ուսանողների համագումար: Նրա աշխատանքներին չմասնակցած Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիայի մի խումբ հայ ուսանողներ՝ Վարդես Քաջազնունին /Շովի. Քաջազնունու մեջ Եղբայր/, Մարտին Չարիջյանը և Ստեփան Զորյանը սկսեցին մտածել համառուսական հեղափոխական շարժումից առանձնանալու նաև: Նրանք ցանկանում էին պայքար սկսել հայկական հարցի

³² Ստեփան Զորյանը իր քաղաքական գործունեության ընթացքում հանդես է եկել բազմաթիվ կեղծանուններով՝ կամ ազգանուններով՝ Ռոստոմ, Զորեր, Արքահամանց, Փափայան, Գրիգորյան, Գասպարյան, Ռոստոմյան և այլն: Սակայն դրանցից Ռոստոմ կեղծանունը այնպես է միաձուլվել նրա կյանքի ու գործունեության հետ, որ ՀՅԴ-ի պատմության մեջ մնացել է իրու Ռոստոմ:

³³ Տարագիր, Յայր Աբրահամի մասին, «Յայրենիք» ամսագիր, Բուստոն, 1933, N 1, էջ 78:

լուծման համար: 1890 թ. ստեղծվեց Կայ Յեղափոխականների Դաշնակցությունը: Ուստումն ամբողջ թափով միշրճվեց ազգային-ազատագրական պայքարի մեջ:

Երկրորդ ենթագլխում «Ուստումի դերը ՀՅԴ ձևավորման գործում», լուսաբանվել է Ուստումի ակտիվ գործունեությունը ՀՅԴ ներսում՝ 1890-ականների սկզբներին: Փաստերը ցոյց են տալիս, որ չնայած Ուստումը անմիջականորեն չի մասնակցել Կայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովներին, բայց գաղտնի կերպով կապ է պահպանել նրա մասնակիցների, մասնավորապես՝ Խաչատուր Մալումյանի հետ³⁴:

Նորաստեղծ ՀՅԴ աստիճանաբար փորձում էր ընդլայնել իր գործունեությունը, տեղական կառույցներ ստեղծել Պարսկաստանում (Իրան) և Արևմտյան Հայաստանում: Ուստումն ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ այդ գործին՝ փորձելով Աստրապատականը դարձնել Անդրկովկասի ու Արևմտյան Հայաստանի միջև կապող օղակ: Իր գործունեության իրական նպատակները քողարկելու համար Ուստումը Թավթիզում դարձավ Թեմական դպրոցի ուսուցիչ: 1892 թ. աշնանը՝ ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովից հետո, Ուստումը Քր. Միքայելյանի ու Ս. Զավարյանի հետ միասին շարունակեց ՀՅԴ առաջին ծրագրի մշակման գործը: Դրա համար ամհրաժեշտ էր գրել նաև ներածական մաս՝ ընդհանուր տեսություն: ՀՅԴ-ի համար այդ կարևոր փաստաթղթի՝ ընդհանուր տեսությունը գրելու գործը բաժին ընկավ Ուստումին: Թիֆլիսում «Դրոշակի» առաջին երկու համարների տպագրությունից հետո նրա տառերը տեղափոխվել էին Ռումինիայի Գալաց քաղաքը: Քր. Միքայելյանը Բնարարիայից՝ իր աքսորի վայրից, մեկնել էր Ռումինիա և կազմակերպել «Դրոշակի» երրորդ համարի տպագրությունը: Նրա Թիֆլիս վերադառնալուց և առաջին ընդհանուր ժողովին մասնակցելուց հետո ամհրաժեշտ էր շարունակել այդ գործը: Ռումինիայից տեղեկություններ էին ստացվում, որ «Դրոշակի» տպարանը վտանգված է և կարող է ընկնել ոստիկանության ձեռքը: Տպարանը փրկելու համար Քր. Միքայելյանի ընտրությունը կանգ առավ Ուստումի թեկնածության վրա: Վերջինս ոչ միայն կարողացավ տպարանը տեղափոխել մեն, այլև դարձավ «Դրոշակի» կանոնավոր տպագրության կազմակերպիչն ու նախաձեռնողը: ՀՅԴ կազմակերպության ծևավորման ու ամրապնդման, «Դրոշակի» տպագրության և առաջին ծրագրի մշակման համար Ուստումի կատարած աշխատանքները այնքան ծանրակշիռ էին, որ նա իրավամբ դարձավ այդ կուսակցության երեք հիմնադիրներից մեկը:

Երրորդ ենթագլխում վերմագրված է «Գործունեությունը 1894-1896 թթ. համիլյան ջարդերի շրջանում»:

1894 թ. նոյեմբերին Ուստումը պարսկահպատակ Վրթանես Փափազյանի անձնագրով ժամանեց Բուխարեստ: 1894թ. դեկտեմբերի 2(14)-ին³⁵ Ուստումը ձերբակավեց ռումինական ոստիկանության լողմից: Կարծ ժամանակ անց Ուստումն արդեն ազատ էր արձակվել: 1895 թ. գարնանը Ուստումը կրկին Շվեյցարիայում էր, ուսումնասիրում էր տեղում արտադրվող հրացանների ու ատրճանակների տարբեր

³⁴ Խուդինյան Գ., Դ. Դաշնակցության ծնունդը, Եր., 2000, էջ 92-93:

³⁵ ՀԱԱ, Փ. Կոլլեկցիա- 3, СА /Поступление/-89, գլ. 17, օպ. 2, գ. 46/1001, լ. 15-16.

տեսակները և հավաքում նրանց կատալոգները: Նա նպատակ ուներ մտնել Արևոտյան Դայաստան: 1895 թ. ամռանը մեկնեց Կարին:

1895 թ. հոկտեմբերի 18-ին սկսվեց Կարինի կոտորածը, որի մասին Ռուսություն «Դրոշակին» ուղարկում է «Սամակ Կարինից»³⁶ թղթակցությունը: Կարնո ջարդերի անմիջական ազդեցության տակ օրեր անց Ռուսություն գրել է «Մահմեդական ամրոխիչ դերը»³⁷ և «Ժողովրդի ինքնապաշտպանութիւնը եւ Դաշնակցութեան խմբերը»³⁸ հոդվածներում:

Դաշորդ Ենթագլուխում՝ «Ռուսություն Բուլղարիայում. ՀՅԴ-ի և բուլղար հեղափոխականների հաճագործակցությունը» ներկայացվել է Ռուսությունի գործունեությունը Բուլղարիայում, որտեղ նա ժամանել էր ոչ միայն Արևոտյան Բյուրոյի ներկայացուցչի իր պարտականությունները կատարելու, այլև որոշակի քաղաքական ծրագիր իրագործելու համար: Խախատեսվում էր. «1. Ունենալ սեփական մանուլ, 2. Բանալ մասնաւոր վարժարան, 3. Զարկ տալ գեղարուեստին, 4. Կազմել դաշնակցական երիտասարդներու խումբեր, 5. Պուլկարահայութիւնը սիրոցնել պուլկար ժողովուրդին եւ կառավարութեան՝ ամրացնելով անոր դիրքը զանազան տնտեսական ու քաղաքական ոտնձգութիւններու դեմ»³⁹: Ռուսությունի ուսերին էին ընկել նաև Բալկանյան թերակղղում որպես ՀՅԴ գործիչ հաստատված Գարեգին Խաժակի հետ կապեր հաստատելու հարցերը:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ «ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒ ԻՐԱՍԱԿԱՆ ԴԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՌՈՍՏՈՄԸ», բաղկացած է 4 Ենթագլուխներից:

Առաջին Ենթագլուխում՝ «Անդրկովկասի հայության իրավունքների պաշտպանը» անդրադարձել ենք Ռուսությունի գործունեությանն Անդրկովկասում, որտեղ ծավալվում էր «Փոթորիկի» գործը: «Փոթորիկ» խմբի անդամ էր նաև Ռուսություն և իր ամբողջ եռանդ ի սպաս էր դուռը այդ գործին: 1904 թ. հունիսին Ռուսություն գործի է անցնում ժնուտմ, սակայն ուշադրության կենտրոնում է պահում Անդրկովկասը: Նա կռահում էր, որ Անդրկովկասում հասունացող իրադարձությունները շատ կարևոր նշանակություն են ունենալու հայ ժողովրդի ճակատագրի համար: Մի կողմից՝ 1905 թ. հունվարին Ռուսաստանում սկսված հեղափոխությունը, մյուս կողմից՝ 1905 թ. փետրվարին տեղի ունեցած Բաքվի հայության կոտորածը, ՀՅԴ-ին կանգնեցրել էին մարտավարության փոփոխության հարցի առջև, իհմնականում այս հարցերի շուրջն էր կազմվել 1905 թ. ապրիլին իրավիրված ՀՅԴ «Խորհրդի» օրակարգը, որին ներկա էին երկու Բյուրոների և պատասխանատու մարմինների ներկայացուցիչները:

Դիմանական հարցը «Կովկասյան խնդրի» քննարկումն էր: ՀՅԴ Խորհրդուն ընդունեց Ռուսությունի կազմած բանաձևը, ըստ որի անհրաժեշտ էր համարվում մինչ նոր ընդհանուր ժողովի իրավիրունը Անդրկովկասում գործունեության նոր ծրագիր ունենալ: Այս բանաձևի հիմնական գաղափարը հետևյալն էր. «Կովկասեան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափողական գործունեութեան, մշակել ծրագիր՝ համաձայն Կովկասեան Ռայոնական ժողովում

³⁶ «Դրոշակ», 1895, 15 դեկտեմբերի, N 21, էջ 3-4:

³⁷ «Դրոշակ», ժմն, 1896, 10 փետրար, N 5, էջ 33-35, 20 փետրար, N 6, էջ 41-42:

³⁸ «Դրոշակ», ժմն, 1896, N 6, էջ 43-44:

³⁹ Մազմանեան Վ., Յուշեր Ռուսություն մասին, «Ռուսություն: մահուան վարսունամեակին առթիւ», Պեյոնութ, 1979, էջ 225:

